



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՀԱՅ. ԱՌԿԱՅԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

TRUSTEES OF
ARMENIAN APOSTOLIC CHURCH

1000 N. HOYNE AVE.
CHICAGO

Ապրիլ 9, 1940.

S.S. Գարեգին Առքեղիսկոպոս
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
ի ներ Եօրք.

Սրբազն Հայր

Կուգանք այս առթիւ յայտնել Զեր Սրբազնութեան՝ մեր և
Ծիքակոյի Հայ հասարակութեան խորին շնորհակալութիւնները Զեր
հայրական այցելութեան համար:

Տեղական արդի հարցերու մասին հոգաբարձութիւնս պէտք
եղածին աւելի Զեր Սրբազնութեան հետ խորհրդակցեցանք բայց Զեր
վերջին քարոզի միջոցին ըրած յայտարարութիւննէն վերջ ժողովրդի մէջ
յարուցած ազդեցութիւնն ևս Զեր Սրբազնութեան ուշադրութեան չ՝ յանձնել
արդարութիւն չե պիտի ըլլար:

Ժողովուրդի կողմէ մեզ հարց կը որուի թէ՝ եթէ երբէք
Տէր Ղետոնդ Աբեղայ անպարտ էր էրդեօք ինչ կ ստիպէ որ ան ամիշապէս կամ
մօտաւոր ապագային իր պաշտօննէն հեռացուի, արդեօք ինչու իրեն տռիթ
չտրուի որ իր պայմանաժամը լրացնէ՝ քանի որ շատ քիչ ժամանակ մը
մնացած է:

Քանի կ՝ սպասենք Զեր Սրբազնութեան օրինաւոր կարգադրութեան,
կը փութանք տեղեկացնել վերոյիշեալ իրողութիւնը ի գիտութիւն
կեղունական վարչութեան և Զեր Սրբազնութեան:

Մեր եկեղեցական գործունէութիւնը ըստ առաջնոյն կանոնաւոր-
ապէս կ՝ ընթանայ:

Արդեօք կարելի է իրկել մեզ Երիտասարդաց Միավութեան կանոնագիրն
և Ծրագիրն որպէսզի կարենանք կազմակերպել մեր Երիտասարդութիւնը որ
կը գտնուի կազմակերպուած վիճակի մէջ:

Մաղթելով Զեզ կարողութիւն և առողջութիւն
մնամք ի գիմաց Եկեղեցւոյ Հսգաբարձութեան
ատենապէր

R. H. Grimes -

Բայց Գ. Առաքելյան -



ՀՈԳԱԲԱՐՁԻՒԹԻՒՆ

T R U S T E E S O F
ARMENIAN APOSTOLIC CHURCH

**1000 N. HOYNE AVE.
CHICAGO**

Urgent, 1940.

Տնտեսական խորհուրդ
Առաջնորդարանի Հայոց
նիւթ Եօրք.

ՑԱՐԳԵԼԻ ՏԵԱՐՔ

Ներփակ կը խրկենք 100+50 տոքարնց չեք մը որու մանրամասնութիւնները զատ թուզբի վրայ նշանակուած են:

Կը խնդրում եմ թերթի Շեքակոյի վճարող բաժանորդներուն ստացականը և չի վճարողներու պիլերը մեզ Խրկել, իսկ Շեքակոյէ դուրս վճարողներու ստացականները և չի վճարողներու պիլերը ուղղակի իրենց խրկեք:

Եթէ մկրտութեան, պսակի և թաղումի արձանագրութեան մասնաւոր տեսրակ ունիք հաճեցէք ուղարկել մեզ հատ մը:

Դիմաց Եկեղ. Հոգաբարձութեան
ատենադպիր

~~6~~ \$300 Cash

J. J. "By my troth" says he has 25 or more off
wif's of wif's & so on.

ՀԱԳԱՄՈՒ
Ժ. Խ.

Մարտ 7, 1940

Հոգեշնորհ
Տ. Պետոնդ Արեղայ Արագեան
Հոգեւոր Ծովի Շիքակօյի թեմին,

Ստացած ենք տարւոյս Փետրուար 22 թուակիր շեր գրութիւնը
որպէս կը տեղեկագրէիք թէ, Յունուար 12-ին, տեղի ունեցած է շեր Համայնքի
Հոգարաքական մասնակի ընտրութիւնը, եւ Ներկայացնելով Հոգարաքութեան
ամրօղջական կազմն ու գիւտնը, կը խնդրէիք վաեծրացման պաշտօնագիրը
Կատարուած ընտրութիւնը գտնելով Սահմանադրութեան օրինաց
Համաձայնայնու կը վաւերացնենց Հետեւեալ կարգով—

Տեարք Խորէն Դաւիթեան

Ա. Խոպիրեան

Լ. Զէշեան

Արմէն Պալթաեան

Սարգիս Շիրվանեան

Հրանտ Կէտրիկեան

Վահան Թաշճեան

Ալենապետ

Օ-Ալենապետ

Ալենազպիր

Գանձապահ

Խորհրդական

"

Աղօթող ենք որ Նորակազմ Հոգարաքութիւնը, Համերաշխ եւ
զործակցական ոգիով, բոլոր զործունեւութեան արգիւնաւոր շրջան մը,
ի փառ եւ յօդուա Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Շիքակօյի մեր Համայնքինս

Հայրական օրհնութեամբ
Մնամբ աղօթարար

Ժ. Խ.

Առաջնորդ Հայոց Ամերիկայի



ՀՈԳԱԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ
ԱՄ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈԹ

TRUSTEES OF
ARMENIAN APOSTOLIC CHURCH

1000 N. HOYNE AVE.
CHICAGO

Փետ. 22, 1940.

Գերաշնորհ

S.S. Գարեգին Արքապիսկոպոս Յովսէփեան

Առաշնորդ Ամերիկայ Հայոց

Ի ՆԷԼ ՅՈՐՔ:

Գերաշնորհ Սրբազն Հայր,

Ուրախութեամբ կը յայտնենք որ Յունուար 12 1940
Ուրբեթ երեկոյ տեղի ունեցած անդամական ժողովին մէջ որուն
ատենագրութիւնը ներփակուած է, Հոգաբարձութեան չորս նոր
անդամներուն ընտրութիւը կատարուելով քուեթ առաւելութեամբ
ընտրուած են Տեարք

Խորեն Դաւիթեան

Արմեն Պալթանեան

Սարգիս Եկովանեան

Վահան Բաշճեան:

Պիսի Խնդրենք ԶերդՍրբազնութիւնէն փութացնել այս
ընտրութեան վաւերացումը:
Մատչելով է Համբոյր Ս. Առաջ

*Համբոյր Ս. Առաջ
Հայ. Հայր Տիգրան Եղիազօրի*

Եանօթ. Պր Վաֆան Բաշճեան կանչուած է Պր Յակոբ Արքունիկ տեղ որը
Տէ ընդունած պաշտօնը:

Մարտ 4, 1942

Հոգեցնորհ
Տ. Զգոն Վրդ. Տէր Յակոբեան
Հոգեւոր Հովիթ Շիգակօջի թեմին,

Ստացանք ամսույս 3 թուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնեից
թէ, Զեր Նախապահութեան ներքեւ կատարուած է թեմիզ Հոգաբարձական մասնակի
ընտրութիւնները եւ ներկայացնելով Հոգաբարձութեան ամբողջական կազմը
կը խնդրէիր վաւերացման պաշտօնագիրը։

Կատարուած ընտրութիւնները գտնելով համաձայն Սահմանադրութեան
օրինացայուս կը վաւերացնենք հետեւեալ կարգավ։—

Տեարց Խ. Դաւիթիթեան	Ա. Առենապետ
Վ. Թոշինեան	Բ. Առենապետ
Գ. Կալպիտեան	Ա. Առենադպիր
Հ. Ամառունի	Բ. Առենադպիր
Ե. Պետրոսեան	Գանձապահ
Տ. Խանճեան	Օքնին. Գանձապահ
Տ. Պէրպէրեան	Խորչըդական

Կօրհնենք Հոգաբարձութեան բոլոր անդամները եւ կը մաղթենք որ
փոխադարձ սիրով եւ զարծակցութեամբ բոլորին արդիւնաւոր գործունեութեան
շրջան մը, ի վաստ Ամենակալին եւ ի պայծառութիւն Հայց. Ծկեղեցւոյն։

Հայրական սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթարաբ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅ 38
ՍՊԻՐՈ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԿԱՆԻՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻ



ARMENIAN
ST. GREGORY ILLUMINATOR
CHURCH

1000 N. HOYNE AVE.
CHICAGO, ILL.

20 Փետրվար 1942

Թերաշնորհ

Տ. Գարեգին Արքեպիսկոպոս
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Ներքություն

Մըրազան Հայոց

Ս. Եկեղեցւոյս Անդամական Ժողովը իր ներկայ առրեշտանի 20 ֆետր
1942ի Ա. Նեստին մէջ օրակարգ ունենալով Հոգաբարձութեան երկամեայ շրջանի
աւարտումին երեք դադարեալ և մէկ պակասեալ անդամներուն տեղ նորեր ընտրելու
հարցը, գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ յառաջիկայ
երկամեայ շրջանին համար Հոգաբարձութեան Անդամ ընտրեց Ազնո Տիարք Դաւիթեան
Խորեն, Խանճեան Յակոբ, Պետրոսեան Եղուարդ, և Կալպետեան Գրիգոր:

Հոգաբարձութեան մնացեալ և նորընտիր անդամները ամսոյս յաջին ժա-
ռայականիս նախագահութեամբ նիստ գումարելով սապէս կազմեցինք գիւտնը:

Ազնո Տիարք Դաւիթեան խո և Թաշճեան Վ. Ատենապետք:

Ճ. Կալպետեան Գ. և Ամասունի Հրագետք Ատենապիրք:

Ճ. Պետրոսեան Ե. և Խանճեան Յ. Գանձապահք:

Ճ. Տիարք Պէրպէրեան Յ. Խորհրդական:

Կը լնդրենք որ ըստ սահմանադրական օրինաց կատարուած այս ընտրու-
թիւնները վաւերացնէք և Զեր Օրհնութիւնները շնորհէք սոյն կազմին որպէսզ
եր պաշտօնը արդիւնաւորէ ի փառս Աստուծոյ և ի պայծառութիւն Հայ Եկեղեցւոյ:

Օգնութեան Յանձնախումբին Հրապարակային Ժողովը կը լինի Մարտ 22ին:
Մեր Եկեղեցւոյ մէջ Մեծ Պահոց Ուրբաթ Երեկոյներուն կը կատարենք խաղաղա-
կան ժամերգութիւն որմէ յետոյ կը լինի Քարոզ կամ Դասախոսութիւն: Մարտ
20ին Ուրբաթ Երեկոյ կը փափաքինք Կրկնպէս օգոտւիլ Զեր ներկայութենէն:
Նաև կը նախագահէք Միջինքի Ընթրիքին, ապա ժամերգութեան, որմէ անմիջապէս
յետոյ կը քարոզէք կամ կը դասախոսէք 30-40 վայրկեան: Զեր նախասիրութիւնն
ու նիւթը այժմէն գրեցէք ինչ որ ըստ այնմ յայտարարեմ: Անշուշտ որ Կիրակի
առաւետ ալ սուրբ Պատարագի ժամուն կը քարոզէք: Ուրբաթի Զեր Քարոզ-Դասախո-
սութենէն յետոյ կը նախագահէք Հայկ: Յանձնախումբը ընդլանուած նիստին ուր
պիտի ծանանք խոստումներ առնել կամ այլ կարգադրութիւններ ընել դիւրացնելու
համար Ժողովում և անկէ դուրս կատարուելիք հանգանակութեան ընթացքը:

Ուստի կը ինդրենք որ գոնէ Մարտ 19ի Երեկոյին կամ 20 կէսօրին Եիկագոյ
հասնէք: Մարտ 23ի Երեկոյին ալ Եկո: Տիկնանց իկրնստընի Մասնաճիւղը Ճաշ պիտի
տայ ի պատիւ Զեր Մրազնութեան: Ուոգէկըն գրեցի բայց զեր պատասխան չառի: Մ
Մնացեալը կը կարգադրենք: Եղածին համար Զեր հաճռութեան շուտով կը սպասենք:

Համբուրիւ ս. Աջոյդ կամ և մնամ

Ամենախոնարհ նառայ
Հ Գ Օ Վ Վ Ա Ր Դ Ա Պ Յ Տ Ս

Փետրուար 23, 1943

Հոգեշնորհ
Տ. Զակորեան
Հոգեւոր Հովի Շիզակոյի թեմին,

Ստացուած է ամսոյ 17 թուակիր Ձեր գրութիւնը որով
կը տեղեկացնեիր թէ, Ձեր նախագահաւոթեան ներքեւ կատարուած են
թեմիդ Հոգարարձական մասնակի ընտրութիւնները և ներկայացնելով
ամբողջական կազմը կը խնդրէիր Վաւերացման պաշտօնագիրը:

Կատարուած ընտրութիւնները գտնելով Առհմանադրութեան
օրինաց Համաձայնայութ կո վաւերացնենք Հետեւեալ կարգով,-

Տեարք Ի. Դաւիթեան	Ա. Առենոսիան
Մ. Յանիկայուրեան	Բ. Առենոսիան
Լ. Քէշեան	Ա. Առենաղպիկ
Կ. Քէշեան	Բ. Առենաղպիկ
Ե. Պետրոսեան	Գանձապահ
Յ. Յանիկայուրեան	Ղգնական Գանձապահ
Գ. Կալպետեան	Խորհրդական

Կորհնենք Նորակազմ Հոգարարձութեան բոլոր անդամները
եւ կո մասնակի ընտրութեան օգտակար եւ արդիւնաւոր գործունէութեան
շրջան մը ի ժառանք Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ յօգաւա Շիզակոյի
մեր Համայնքին:

Հայրական գոհնութեամբ
Մնամք աղօթուրաբ

Ձ.

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ՏԳԹԱՆԱՀԻ 3065

• զ • զ • ս մ ս գ • ր վ յ
կ ր տ հ կ ս գ յ լ ի ն ս ր տ շ ն մ ա դ շ ո ւ ս լ լ
ո ս ի ս հ ո վ ե գ ժ մ յ լ լ ո վ ճ ճ գ մ ո ր ի • Տ
Տ յ ս դ շ ո ւ մ դ կ ե

ԵՐԵՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ


CHICAGO, ILL.

1000 N. HOYNE AVE.

ԾԿԱՎՈՒՄՆԵՐ ԽԵԿԺԵ ՀԵՎՈՒ

ՀՅՈՒԹՅՈՒՆ

**ARMENIAN
ST. GREGORY ILLUMINATOR
CHURCH**



BOARD OF TRUSTEES

ARMENIAN ST. GREGORY ILLUMINATOR CHURCH

**1000 N. Hoyne Ave., Chicago 22, Ill.
Phone Albany 2-9899**

ARCH PRIEST REV. V. PAPAZIAN

M. H. GERANIAN **CHAIRMAN**
PENSACOLA 6-7882, 7-10 A. M.
DELWARE 7-8884, 2-6 P. M.

N. KESHIAN **ASST. CHAIRMAN**
VANDERSILT 4-7995

H. CHANGELIAN **SECRETARY**
JUNIPER B-2360

V. MICHAELIAN ASST. SECRETARY
EUCLID 8-2063

D. MOMJIAN **TREASURER**

C. KALKANIAN **ASST. TREASURER**
WILLIAM C. BROWN, CHIEF TELLER

STANDARD ADVISER

MERRIMAC 7-8192

J. PARLAJAN **ADVISER**

BRUNSWICK 8-3777 OR NATIONAL 2-3331

APPOINTED JUNIOR TRUSTEES

M. NAMPARZOUMIAN	UPTOWN 8-8700
A. GURUNIAN	UPTOWN 8-2887
T. GARABEDIAN	EVERGLADE 4-7198
A. AZNAOURIAN	BELMONT 8-6442
S. ABIZETIAN	INDEPENDENCE 3-2367

Ժամը լրանակէ ետք, կը փափաքի հրաժարիլ. թէւ երկուստեղ գոյն ենք իրաբժէ:

Ուստի, երէկ- Սեպտեմբեր 13, 1958- Շաբաթ օր, այդ ժողովը տեղի ունեցաւ Զեր Նախագահութեամբ. ուր Ներկայ էին Հոգաբարձութեանս կազմէն, Ատենապետն. ճերանեան, Ատենադպիր՝ Հ. Չանկալեան, Գանձապահ՝ Տիրան Մումճեան, Փոխ Գանձապահ՝ Կ. Գալքանեան, Խորհրդական՝ ճան Բակլանեան: Ներկայ էին նաև,
Տ. Հայրը, եւ հիւրաբար՝ Տ. Վարուժան Վրդ. Գապարանեան:

Հոգաբարձութիւնս Ս. Եկեղեցւոյս համար, մնայուն Հովիւ մը ունենալու
հարցը սոյն ժողովին մէջ Զեր Նկատառութեան յանձնեց. Եւ Զեր Արքազնութիւնը
մէկի խոստացաւ որ Տ. Վրբանէս Հօր- ըստ պայմանագրութեան- մէկ տարուան պայ-
մանաժամը լրանուուն, առաջին առթիւ, Մեր Եկեղեցիին համար պիտի տրամադրեց
յարմարագոյն Հովիւ մը, Երուսաղէմէն կամ Պոլիսէն:

Այսու կը խնդրենք որ բարեհաճիք Ձեր սոյն խոստումը գրաւոր յայտնել մեզի, որպէսզի մեր Համայնքը վստահ ըլլայ թէ՝ Եկեղեցին առանց Հովհաննի պիտի չ'մնայ, եւ մենք պիտի ունենանք մեր մնայուն Հովհան:

Սեպտեմբեր 14, 1958.-

ԳԵՐԱԶՈՒՐԸ

Տ. Մամբրէ Ա. ԱրքԵպիսկոպոս Գալֆաեան

Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի,

Նիւենը .-

ԳԵՐԱՀՆՈՐԾ ՍՐԲազաՆ Հայր,

Երէկ, Զեր քաղաքս այցելութեան բարեպատեհ առթիւ Հոգաբարձութիւնս փափաքեցաւ Զերդ Սըբազնութեան Նախադահութեամբ ժողով Մը գումարել . Նկատի առնելու Համար յատկապէս, Ա. Եկեղեցւոյս մնայուն Հովիւի հարցը:

Մեր առժամեայ Հովի՛ւ Արժ. Տ. Վրբանէս Ա. Քհն. Փափազեանի հետ ժեր կնքած մէկ տարուայ պայմանաժամը կը լրանայ 1959 Ապրիլ 21 ին. եւ Տ. Հայրը պայմանա-

Ժամը լրանակէ ետք, կը փափաքի հրաժարիլ. թէւ երկուստեղ գոյն ենք իրաբժէ:

BOARD OF TRUSTEES

ARMENIAN ST. GREGORY
ILLUMINATOR CHURCH

1000 N. Hoyne Ave., Chicago 22, Ill.
Phone Albany 2-9599

Ներեցէք որ Զեղի այս ձանձրութիւնը կը պատճառենք:

ARCH PRIEST REV. V. PAPAZIAN

Մնամք որդիական խոնարհութեամբ եւ համբուրի Ս. Աջոյք

M. H. GERANIAN CHAIRMAN
PENSACOLA 6-7882, 7-10 A. M.
DELAWARE 7-8884, 2-6 P. M.

Ի դիմաց Հոգաբարձութեան

N. KESHIAN ASST. CHAIRMAN
VANDERBILT 4-7995

H. CHANGELIAN SECRETARY
JUNIPER 8-2360

V. MICHAELIAN ASST. SECRETARY
LUDLOW 8-2880

D. MOMJIAN TREASURER
LUDLOW 8-8103

C. KALKANIAN ASST. TREASURER
VILLAGE 8-8883 OR VILLAGE 8-3774

J. TATOIAN ADVISER
MERRIMAC 7-8192

J. PAKLAIAN ADVISER
BRUNSWICK 8-8777 OR NATIONAL 8-3831

H. SERAYDARIAN ADVISER
RODNEY 8-4082

APPOINTED JUNIOR TRUSTEES


M. HAMPARZOUNIAN UPTOWN 8-8700

A. GURUNIAN UPTOWN 8-2887

T. GARABEDIAN EVERGLADE 4-7198

A. AZNAVOURIAN BELMONT 8-6484

S. ABEZETIAN INDEPENDENCE 8-2887



Թիւ 3690
Հոկտեմբեր 9, 1958

Մեծայարգ

Տիար Խաչիկ Ճէրանեան
Առենապետ Միական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Ծիգակո.

Ցարգելի Պրն. Ճէրանեան,

Ցարւոյս Սեպտեմբեր 14 թուակիր Զեր Խամակը, որով կան-
դըրադանայից Զեր Եկեղեցւոյ յարմարագոյն Հոգեւոր Հովիւ մը արա-
ժադրելու հարցին, ստացուած է եւ Առաջնորդ Գերաշնորհ Յ. Խամբարէ
Ա. Արք. Գալնանեան նկատի պիտի առնէ Ս. Էջմիածնէն իր Վերադարձին:

Այս ամբիւ պատեհ կը Համարինք ըսել թէ Զեր Համայնքի
Հայ Դպրոցի Խնամակալութեան, ինչպէս նաև եկեղեցնի մեր Եկեղեց-
ւոյ Միական Խորհուրդը տանձնարար Առաջնորդարան դիմաց են հարկ
եղած կարգադրութիւնը ընելու Գաղթային գրասենեակին մօս՝ Պոլսոյ
Միհրաբեան գպրոցն շրջանաւորտ Պրն. Միհրան Ցամպուրանեանն պահ-
լու այս երկիրը իրրեւ ուսուցիչ Զեր գպրոցին:

Զեր եւ Եկեղեցնի գպրոցներուն Համար արգէն երկու ու-
սուցիչներու Համար կարգադրութիւն եղած է Դժուար թէ կարելի ըլլայ
երրարդի մը Համար դիմում կատարել։ Ցանձնարարելի պիտի ըկլաք որ
Պրն. Ցամպուրանեանի Համար դիմում կատարուէր Ռէյսինի, Ուխող Ալիսի
կամ Ուխող Փուլմընի մեր Համայնքներէն միոյն կոզմէ, ուզգակի Իլի-
նոյզի կամ Ուխոցներնի նահանգներուն մէջ գոյութիւն ունեցող Գաղ-
թային գրասենեակներէն մէկունու Ասենէ մը ի վեր դիմումները այզպէս
կըլլան գպրապեներու կամ ուսուցիչներու Համար։ Ցանձնաներու կամ
ասուածարանական ուսանողներու պարագան բոլորովին տարրեր է. անոնց
Համար դիմումը անպայման պէտք է ըլլայ Առաջնորդարանէն Հետեւարար,
Հանեցէր Ս. Թակոր Եկեղեցւոյ Միական Խորհուրդի Հայ Խորհրդակցարար
Հարկ եղած օրինական քայլերը առնել Պրն. Ցամպուրանեանի Համար Զեր
միջացներով և հարկին, երբ Գաղթային գրասենեակէն այդ մասին Հար-
ցում ըլլայ, Առաջնորդարանը կրնայ Հաստատել ուսուցչի Զեր կարիքը։

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ մազթելով Եկեղեցաշէն
Զեր գործոց յաշողութիւն։

Մնամք սիրոյ ողջունիւ
Ազօթարար

ՄԻՒՐՈՆ Ս.ՎՐԴ. ԿՐԺԻԿՅԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

ԴԱՏԱԿ ԱՆԳԱՄԱԿԱ ՓՈՂՈՎ
ԵՐԵՎԱՆԻ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԱՆՈՐՔ ՀԱՅԱ. ԱԿԱԴԵՄԻ

For more information about the study, please contact Dr. John Smith at (555) 123-4567 or via email at john.smith@researchinstitute.org.

Այսօր, Հակոբեաբեր 4, 1959-կի րակի, յետ ժամերգութեան, Եփակօյք Ա. Գր. Խուսակորիչ Հյուց. Ակեղեցւոյ ԲԱՅԱՐԻԿ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ գումարուեցաւ Խախ- զահութեամբ Տ. Վրթանէս Ա. ՔՇՆՅ. Փափազեանի, և Առենապետութեամբ Ցոքք. Հ. Խաղընծանի: Ներկայ էին 55 արտաւ անդամ-անդամոււնիներ:

Տ. Հօր ազօթով ժաղավը բացուեցաւ. ՕՐԿԱՐԴԻ ՀԱՐԹԵՐՆ ԷԻՆ ԾՅՈՒՆԱԳՈՒՔԸ
Ա.- Երեսփախանական ժաղավին զրկուելիք Հարցեր.-

Բ. - Տեղեկաբան Հայ Պարսկ մասին. -

Գ.-Մայուսն Հովիքի մասին, Առաջնորդ Սրբազնի կարգագրութիւնը.-

Դ. - Կիբակնօրեայ Դպրոցի մասին Տեղեկաբուժիւն.-

Ե.- Զեկոյք, եկեղեցւոյ Եկնութեան Յանձնափուլի կօդմէ.-

2.- Ցնիքառեսուսի Հարցեր.-

Առենապես ջոքք. Հ. Խազբյան, նախ շնորհակալութիւն յայնեց Ներկաներուն, իրեն արուած վատահութեան Համար, և պարզելով ժողովին կարեւորութիւնը, ՕՐԱ-ՔԱՐԴԻ Հարցերը միաւմի Ներկայացաւց, թելազրելով որ խօսք առնազներք, կար և ամփոփ տան իրենց կարեթեներք: Եւ խօսք տուաւ Պրե. Խ. ճերանեանի որ կարգայ Թեմական Խանձնազրութեան Բարեփախեալ Օրինակը, որ զրկուած էր Միական Խարհուրդին, Առաջնորդարանի կողմէ.-իւրաքանչիւր Համայնք իր կարեթեց տալու Համար, բարեփախուած կէտերւ մասին:

Յետ ընթերցման կանոնագրի Բարեփախեալ Օրինակին, ժաղավր ՈՐՈՇԵՑ.-

1.- Առաջնորդի Ծնորութիւնը կատարել 4 տարուայ Համար, Համաձայն Նպիսրդ Կանոնագրութեան արամագրութեան:

Հայրենիք ընտրութեան եւ անոր պաշտօնավարութեան շրջանց ԱՐՈԵՆԵՐԻ իրաւունքը կը պահպանի Ցեղական Միական Ժողովին, Առաջնարդարանի գլուխակութեամբ:

3.- Եթէ նրեսփոխանները, որինչ պատճառաւ հնարաւորութիւն չեն ունենար նրեսփոխանկան ժողովին մտնելու, այդ պարագային, յաշարդ տառելազոյն քուչ բացազր-կամ ստացազները պէտք է փոխարինեն անոնց, միմիւյն այդ ժողովին համար

Ապա, ժողովին Առենապետը ներկաներուն յախարքեց Առաջնորդ Սրբազնի հետ
Խորհուրդին ունեցած համայնշութիւնը, ըստ պրում- Պալեօդի Կառակին Ծիգակօյի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայոցը. Նկեղեցւոյ մէջ բացուած Հայ Վարժարանին համար
յատկացուած ԳԱՅ ամսական ՀԱՐԻՒԹ տոլար գումարը պիտի յատկացուի Նրաւագէմի մէջ
ուսանող Ընծայցուի մը, որ պիտի ըլլայ մեր ՍԱՆԸ, որ 4-կամ 5- տարի ետք կրօնա-
կան Ժենանարուելով պիտի ծառայէ մեր Համայնքին:

Իսկ առամսութեա Յ. Վըթանէս Հայրը Սրբազնին Հրահանգով պիտի պաշտօնավարէ
մեր Եկեղեցւոյ մէջ:

- Ս. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանը բացուած ըլլալով, Տեսչունի Ցիկին
Զ. Լազարեան, տէղեկութիւններ տուաւ Վարժարանի և աշակերտութեան մասին. Եւ իր
շնորհակալութիւնը յայտնեց Հոգաբարձութեան, որ Եկեղեցւոյ կից սենեակները մար-
րել ուուած է, եւ Ներկայանալի Վիճակի մէջ յանձնած է Կիրակնօրեայ Վարժարանին:
ՀԱՅ ԴՐՈՅԻ ՀԱՐՑ.-

Հայ Ռպրոցի Նախորդ Մնամակալութիւնը Հրաժարած ըլլալով աշակերտներու թիւը
նուազած ըլլալուն պատճառաւ, խնդրուեցաւ Նախորդ Մնամակալութեան անդամներէն,
որ բարի ըլլան իրենց Հրաժարականը ետ առնելով, շարունակեն իրենց պաշտօնց-
մինչեւ գէթ Ցարեկան Անդամական Ժողովի թուականը:

Մնամակալութիւնը ընդունեց ժողովի կողմէ եղած սոյն խնդրանքը. պայմանաւ որ
Հոգաբարձութիւնը ստանձնէ աշակերտներ արձանագրելու պարտականութիւնը:

Կարեիքներու փախանակութիւններէ ետք, այս Հարցը եւս լուծուած Համարուեցաւ:
Նախագահ Յ. Հօր Պահպենիշով փակուեցաւ Բացառիկ Անդամական սոյն ժողովը:
Սանօթութիւն.- Եին. Յիսումբի անդամները, նոյն օրը քաղաքէն կը բացակայէին:



Եիգակո, Հոկտ.

Առենապետ

Առենապետ

Նախագահ

Hampar Yازijian M.D.
HARLEM-DIVERSEY MEDICAL CENTER
7122 W. DIVERSEY AVENUE
CHICAGO 35, ILLINOIS

Եիգակօ, Փետրուար 15, 1960

Գերաշնորհ

S. Սիռն Ս. Արքեպիսկոպոս

Առաջնորդ Հայոց Միացեալ Նահանգաց,

Նիւենորք, Ն.Ե.

Սիրելի Սրբազն Հայր,

Ինչպէս որ Զեղի ծանօթ է, Եիգակօն Միացեալ Նահանգներու մէջ, ամենէն շատ տարածուած մեծ քաղաքներէն մէկն է. ուր մեր ժողովուրդի ստուար մասը ցըուած է Կեդրոնէն հեռաւոր թաղերու մէջ-զանազան ուղղութեամբ:

Իրաց այս վիճակին մէջ, թէեւ մեր Հովիւր ամէն ջանք կը թափէ իր հոգեւոր պարտականութիւնը անթերի կատարելու համար. բայց մենք կը տեսնենք եւ կը զգանք որ, անիկա իր ժիղիքական կարողութենէն աւելին ընելու նուիրումով, կը տուժէ իր առողջութեան տեսակէտով։ Այս պայմաններու տակ, ես որպէս բժիշկ, յատկապէս խղճի պարտք կը զգամ որդիաբար ու մտերմաբար խղճրելու Զեզմէ, որ բարեհաճիք պատշաճ կարգադրութիւնով մը, մեզի տրամադրել երիտասարդ Հովիւ մը։

Այս առթիւ, խոստովանաբար կը փափաքիմ Զերդ Սրբազնութեան խորհուրդը իմանալ թէ, Արժ. S. Տիրան ՔՀՆՅ. Փափագեանը, արդեօք կարելի՝ է մեզի տրամադրել որպէս մնայուն Հովիւ Եիգակօյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ. որմէ ետք S. Վրթանէս Հայրը հնարաւորութիւն ունենայ իր ընտանիքին մօտ ըլլալու. որով մեր խղճի պարտքը եւ իր ալ բաղձանքը կատարած կը լլանք։

Այս մասին սպասելով Զերդ Ս. Թեան բարեհաճեւ դրական պատասխանին,

Համբուրիւ Զեր Ս. Աշոյն

Ատենապետ՝ Եիգակօյի Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգ. Թեան՝



Թիւ 1123
Մարտ 17, 1960

Անձայարգ
Տօքթ. Համբար Եազընեան
Առենապետ Սխական Խորհուրդի
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Շիգակօ.

Սիրելի Տօքթ. Եազընեան,

Զեր Փետրուար 15 թուակիր նամակը ստացած եմ՝ ի մասին
նոր Հովհիք մը Շիգակոյի մեր ծուխին Համար։ Անցեալ Կիրակի, Ույ-
սինի մեր Համայնքին այցելութեանս տեղի ցոյս ունեի զաեզ տես-
նել, սակայն կարելի չեղաւ, ուստի կը պատասխանեմ Զեր գրութեան։

Վստահ կը նաք ըլլալ թէ մեր ալ փափաջն է Զեր Համայնքը
օժտել երիտասարդ Հովհիք մը, սակայն, դուք ալ գիտե՞ թէ առ
այժմ ոչ մէկ Եկեղեցական ունինք տրամադրելի։ Տէր Տիրան ՔՇՆՅ.
Փափազեան Մայիսին պիտի վերադառնայ Տիթրոյթ՝ որովհետեւ Տէր
Առնակ ՔՇՆՅ. Գասպարեան քանի մը ամիս պիտի բացակայի և Անկէ
վերջն ալ իսթ Սէնթ Լուիզի եւ Գլիվլէնտի անհովի ծուխերուն
այցելու Հովհիք պիտի մնայ։

Կաղօթենք որ Աստուած Զեր աշխատասէր ու ժրաշան Հո-
վիքին առողջութիւն եւ կարողութիւն պարգևել։ Մինչեւ որ նոր
ուժեր պատրաստուին մեր թեմի հոգեւոր ծառայութեան Համար։

Սաղթելով Զեզի Աստուծոյ օրհնութիւնները։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի
Աղօթարար

ՍԻՐՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1628
Հոկտեմբեր 24, 1960

Սեհայրգ
Տիար Խոպըրթ Ֆրէնքեան
Առենապես Սիական Խորհուրդի
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Ծրջակօ.

Սիրելի Պրն. Ֆրէնքեան,

Ինչպէս ասկէ առաջ բերանացի յայտնած էինք ձեզի, այսու
Արժանաշնորհ Տ. Ներսէս ՀՀնյ. Արքուրեանը կը նշանակենց Հոգեւոր
Հովիք Նիգակոյի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Համայնքին եւ
Ուսուց Փուլմբնի ծուխին:

Վերջին տարիներ ձեր Եկեղեցւոյ անկազմակերպ Վիճակը մտա-
Հոգութիւն պատճառած էր մեզի, իրազեկ ըլլալով որ ձեր ծխականները
ցրուած են բազարին նոր Բազամասերը եւ մնայուն հովիք չունենալուն
պատճառով՝ Համայնքի Հոգեւոր ու Վարչական կեանաը թուլցած էր:

Ուրաք ենք որ Կարելի եղաւ արտասահմանէն մեր Թեմը Փախադ-
րել Երուսաղէմ ուսումն ստացած Տ. Ներսէս ԲՀՆյ. Արքուրեանը որ իր
քահանայական ձեռնազրութիւնը ստացաւ մեր ձեռամբ Ֆիլատելիքոյ Ա.
Սահակ եւ Ա. Մեսրոպ Եկեղեցւոյ մէջ, որ պատրաստուեցաւ Հովուական
իր պաշտօնին:

Տ. Ներսէս Քահանայ ձեր ծուխի իր Հովուական պաշտօնին պիտի
սկսի Նոյեմբեր 20ին: Ցանքնարարելի է որ իր բնակարանին Համար
Կարգադրութիւն ընէք Փուլմբով:

Լիայոյս ենց որ Տէր Հայրը, պատուարժան Սիական Խորհուրդի
Ծառ գործակցարար, պիտի կարենայ կազմակերպել ձեր Համայնքին զործերը
եւ զարկ տալ ձեր նոր Եկեղեցւոյ շինութեան, որուն պետք անչրաժեշ-
տութիւն մըն է Նիգակոյի մեր ժողովուրդին Համար:

Մաղթելով ձեզի յաջողութիւն եւ Աստուծոյ օգնականութիւնը:

Մնամք Յիրաւանի սիրոյ ողջունի
Եւ օրէնութեամբ
Աղօթարար

ՍԻՐԱՆ ԱՐՁԵՇԻՍԿՈՉՈՒ
Հայշնորդ Հայոց Ամերիկայի

October 24, 1960

Mr. Robert Frankian
Chairman, Parish Council
204 Greenfield Drive
Glenview, Ill.

Dear Mr. Frankian:

According to our conversation, some time ago, we hereby have the pleasure to inform your Parish Council that we have appointed the Rev. Fr. Nerses Baboorian, as parish priest for our churches of Chicago and West Pullman.

We are very much concerned for the decline in the spiritual and administrative activities of your church during the latter years, due to the fact that many of your parishioners have been residing in the new suburbs of greater Chicago.

We are happy that it was possible for us to make an arrangement for permanent residency of Fr. Nerses Baboorian possible. He has received his theological education in the St. James Monastery of Jerusalem and we have ordained him at the St. Sebag & St. Mesrob church of West Philadelphia, where he was prepared for clerical position.

Fr. Nerses will start his pastoral duties on 20th of November, therefor we advise your Parish Council to secure his residential quarters at your earliest convenience.

We are confident that Fr. Nerses, with the full cooperation and assistance of your Parish Council will be able to organize the activities of your parish and put emphasis on the building of your new church which has become a great necessity for our faithful of Chicago.

With paternal blessings,

SIR ARCHBISHOP
Primate of the Diocese of the Armenian
Church of America

Թիւ 6059
Ապրիլ 4, 1963

Մեծայարդ

ՄՏԻԱՐ Ղազար Ղազարեան
Առնապետ Պատուարժան Մխական Խորհուրդի
Ս. Գրիգոր Ղուսաւորիչ Եկեղեցւոյ
Շիգակօ.

Յարգելի Պրն. Ղազարեան,

Առաջնորդ Սրբազն Հայրը ստացած է Ապրիլ 1 թուակիր Զեր
նամակը, որով կը հաղորդէք թէ Զեր Կառուցանելոք Եկեղեցւոյ Հիմ-
նարկեց տեղի պիտի ունենայ Ապրիլ 28ին:

Նորին Սրբազնութիւնը, Շարաթ, Ապրիլ 27ին, Ամերիքըն
էյրլայն Ընկերութեան 913 թափշով Շիգակօ կը ժամանանէ կեսօրէ
եւոք ժամը 3.15ին /0°Հարէ Օդակայան/:

Նորին Սրբազնութիւնը, որ մինչեւ Ապրիլ 30 ձեզի հետ
պիտի ըլլայ, պիտի նախազանէ կիրակի օրուան արարողութեան ու
քարոզէ, ինչպէս նաև պիտի կատարէ Եկեղեցւոյ Հիմնարկեցի օր-
նութիւնը ու պիտի նախազանէ ճաշկերոյթին:


Հանեցէք տրուած ժամանակին Առաջնորդ Սրբազնը դիմա-
ւորել օդակայանին մէջ:

Մեամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Thursday 27, 1963 Departure
Chicago O'Hare International Airport
Chicago to Limerick

AMERICAN AIRLINES FLIGHT 9134
J.V. Smith 3rd-class Chicago to
O'HARE Disembarked:



ARMENIAN ST. GREGORY
ILLUMINATOR CHURCH

1000 N. Hoyne Avenue, Chicago 22, Illinois

Phone AL 2-9599

Ապրիլ 1 1963

Գերաշնորհ Տեր Սիոն Արքեպահանուկեան
Առաջնորդարան Հայոց Հիւսիսային Ամերիկայի
Բարձխնամ Առաջնորդ ։-

Մեր կառուցանելիք եկեղեցոյ հիմնարկեաի
արագողութիւնը տեղի պիտի ունենայ Ապրիլ 28ին։
Ծխական Խորհուրդս քաջալերուած եւ
գոհունակութեամբ պատրաստուած ենք մեր պատշաճ կարգադրութիւն-
ները։ Կատարելու եթէ բարէ յաճիք կանխաւ մեզ տեղեկացնել
թէ որ օրը կընաք Շիքակօ ըլլալ եւ որ ժամուն ժամանելնիդ
քանի օրեր հոս մնալնիդ եւ կամ ուրիշ ինչ արամդրութիւններ
ունիք գործադրելիք որ ըստ այնմ այդ կարգադրութիւնները
կատարենք։

Մեր յայտարարութիւնները ու տոմսերը
պատրաստուած են այդ օրուայ համար որ ժամը երկութին
Հիմնարկեաի արագողութիւնէն յետոյ երեկոյեան ժամը 6:30ին
Ներըթըն Պլաթըստօն Պանդոկին մէջ պիտի ըլլայ ճաշկերոյթ
ու հանգանակութիւն եւ վերջը պարահանէս ճոխ յայտագրով։

20/04/63.

Սպասելով Ձեր հրահանգին

Ապրիլ 27-ին Կայք Եղանակ

Մատչեմ ի համբոյր Ձեր Ս.Ս.Հ.յն
Հայոց Առաքելութեան
Ապար Դաղարեան

Ատենապէտ Ծխական Խորհուրդի

Դամբադակի Եղանակ Թուու

Ապար Դաղարեան Գաղութ

ԱԱ

Թիւ 7172
Յունիս 27, 1963

Մեծայարգ
Տիար Ղազար Ղազարեան
Առենապետ Պատուարժան Մխական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Ծիգակօ.

Միրելի Պրն. Ղազարեան,

Ստացուած է Ձեր նամակը, որով խնդրանք կը ներկայացնէիս ոք էվընսդընի Ս. Ներսէս Շնորհաչի Աստուածաբանական Կարժարանի ուսանող Հոգեշնորհ Տ. Վահրին Արդ. Գազանճեանը նշանակենք ձեր Եկեղեցւոյ պատարագիչ եւ քարոզիչ։

Ա.սոն, Պատուարժան Մխական Խորհուրդի կը հաղորդենք պաշտօնապէս, թէ Ձեր համայնքի այցելու հովիւր՝ Արժանաշնորհ Տ. Արսէն Զէնյ. Պարսամեանն է, ինչպէս Ձեզի հաղորդուած է տարի մը առաջ։ Տէր Արսէն Քահանայ պիտի շարունակէ իր պաշտօնը իբրև այցելու հովիւր՝ տանելով Ձեր համայնքի կրօնական հւ ծխական գործերուն, եւ պիտի նախահէ Մխական Խորհուրդի եւ օժանդակ կազմակերպութեանց ժողովներուն։

Սակայն, նկատելով ոք ամէն կիրակի Ս. Պատարագի մատուցումն զրկուած է Ձեր համայնքը, ընդառաջ երթալով Ձեր խնդրանքին, Տ.Վահրին Աբեղան կը նշանակենք Ձեր Եկեղեցւոյ իբրև այցելու պատարագիչ եւ քարոզիչ միայն։

Իսկ Բարեշնորհ Յովհաննէս Մարկաւագ Գասպարեան պիտի շարունակէ իր պաշտօնը իբրև դպրապետ եւ կիրակօրեայ դպրոցի տեսուչ։

Յուսալով թէ այս կարգադրութիւնը օգտակար պիտի ըլլայ ձնը համայնքի հոգեւոր եւ ծխական գործերու կանոնաւորութեան եւ յառաջդիմութեան, կը մաղթենք Ձեզի Աստուածոյ օգանականութիւնը եւ օրհնութիւնները։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՐՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 7171
Ցունիս 27, 1963

Արժանաշնորհ
Տ. Արտեն ՔԸՆՅ. Պարսամեան
Հոգեւոր Հովիթ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
եւ Խախագահ Պատուարժան Մխական Խորհուրդի
Վոքիկըն.

Սիրելի Տէր Արտեն,

Եկակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մխական Խորհուր-
դը Խախատի ու Նենալով որ ամիսը մէկ անգամ Միայն Ս. Պատուարագ կը մա-
տուցուի իրենց Եկեղեցւոյ մէջ՝ Զեր կողմէ, մեզի խնդրանք Ներկայա-
ցուցած է որպէս զի Ս. Ներսէս Շնորհալի Աստուածաբանական Կարծարանի
նոր ուստանող Հոգեշնորհ Տ. Վահրիմ Արդ. Գաղանճեան Նշանակենք իբրև
այցելու պատարագից իրենց Համայնքին:

Այսու, Զեզի կը հաղորդենք թէ՝ իրաւացի գտնելով իրենց խնդրանքը,
Տ. Վահրիմ Արեղան Նշանակած ծնք այցելու պատարագից եւ արոգից Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Միայն, Խախատի մեր ըրած Կարգադրութեան
Համաձայն, զույց պիտի շարունակէ Զեր պահուով իրերւ այցելու հովիթ
Եկակոյի Համայնքին, Խախագահ Ենով Մխական Խորհուրդի եւ օժանդակ կազմա-
կարպութեանց ժողովներուն եւ հոգ տանելով Համայնքի ծխական եւ կրօնական
կարիքներուն:

Մաղթելով Զեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն Եկե-
ղեցանուէր Զեր աշխատանքներուն մէջ.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 7169
Ցունիս 27, 1963

Հոգեշնորհ

Տ. Վահրիմ Արդ. Գաղանճեան
Ուսանող Ս. Ներսէս Շնորհալի Աստուածաբանական Վարժարանի
եվընսդըն.

Սիրելի Հայր Վահրիմ,

Եիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի
խնդրանքին ընդառաջ երթալով՝ այսու զանց կը նշանակենք Ժամանակաւոր
այցելու պատարագիչ եւ քարոզիչ տեղւոյն մեր Համայնքին։

Ինչպէս անձամբ Զեզի Հաղորդած էինք, միայն Կիրակի օրերը
դուք Եիգակօ պիտի երթաք կրօնական այս պարտականութիւնները կատարե-
լու Համար, եւ շաբթու մնացեալ բոլոր օրերը ազատ պիտի ըւլաք՝ Ձեր
բարձրագոյն ուսման հետեւելու Համար։

Եիգակոյի Համայնքի ծխական եւ Հոգեւոր Հոգակատութիւնը յանձ-
նուած է Վաքիկընի Հոգեւոր Հովի Արժանաշնորհ Տ. Արսէն Քհնյ. Պար-
սամեանի։

Աստահ ենք թէ դպրոցի տեսչութիւնը Համաձայն է մեր այս կար-
գադրութեան։

Կը մաղթենք Զեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ օրհնութիւն-
ները։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

Սիրոն Արքեռուսկոռու
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

June 27, 1963

Mr. Kazar Kazarian
Chairman, Parish Council
5015 W. Catalpa
Chicago, Ill.

Dear Mr. Kazarian:

We have received your letter in which you make a request to designate Very Rev. Vahrij Kazanjian, a student at the St. Nersess Armenian Theological School of Evanston, Ill., to perform Holy Badarak and deliver sermon at your church.

We hereby inform you officially, as we advised you a year ago, that Rev. Fr. Arsen Barsamian will remain as your visitor clergy and therefore will continue to serve at the spiritual and clerical affairs of your church and also will preside at the meeting of your Parish Council and Auxiliary Committees.

In considering that your Parish is deprived of Holy Badarak every Sunday and per your request, we have appointed the Very Rev. Vahrij Kazanjian to perform only Holy Badarak and deliver sermon but Deacon Hovannes Kasparian will continue to serve as Choirmaster and Superintendent of the Sunday school of your church.

Being confident that this arrangement will be beneficial for the advancement of spiritual and clerical affairs of your church, we wish you the assistance and blessings of our Lord.

With paternal blessings,

SIMON ARCHBISHOP
Primate of the Diocese of the Armenian
Church of America

File

By Zaven Chichian



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Ապրիլ 18, 1977

Գերշանորհ

Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւելեան Թեմի
Նիւ Եղբայր.

Գերաշնորհ Սրբազն,

Շաբաթ 9 Ապրիլ 1977ին, կէսօրին մեկնեցայ Շիքակօ Զատկուան արարողութիւն-ները այնպէս եղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ կատարելու համար։ Օղակայանին մէջ զիս դիմաւորեց Եկեղեցւոյն ծխական Խորհուրդի Ատենապետը՝ Տիար Մշան Պապիկեան, ապա միասին զացինք Եկեղեցի։ Արարողութենէն առաջ հանդիպեցայ Ս. Խորանին վրայ սպասարկող տիրացուներուն, որոնց հետ վերաքաղ ըրինք մեր կատարելիք արարողութեան։

Ս. Յարութեան ծրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ, հաւատացեալ ներուն գոհունակութիւն եւ հոգեւոր բաւարարութիւն պարզեւելով։ Արարողութենէն ետք հաւաքուեցանք ներքնայարկը ուր Տիկնանց Յանձնախումբը պատրաստած էր հաւկթասեղան։ Նայելով ներկաներուն հոգեւոր ուրախութեան, խօսք առի եւ ի միջի այլոց ըսի թէ.-

``Ուրախ եմ որ Ս. Յարութեան Զատիկը Զեզի հետ կ'անցնեմ։ Այս տօնը, քրիստոնէական մեր իմացումին մէջ ամենէն մեծ եւ փառաւոր տօնն է։ Մարդիկ կ'աշխատին, գործ մը կ'ընեն որովհետեւ իրենց կոչումը կ'ստիպէ զիրենք եւ հաճոյք կ', զգան իրենց աշխատանքէն։ Բայց դուք ամէնքդ ալ ձեւով մը եւ չափով մը Զերայս սիրուն Եկեղեցիին համար կ'աշխատիք որովհետեւ հաճոյքէն աւելի ուժեղ ըզգացում մը կը մղէ Զեզ։ զԵզ Երջանիկ կ'զգաք Երք ծառայէք Զեր Եկեղեցիին, որովհետեւ ծառայութիւններէն ամենէն ազնիւ տեսակը Աստուծոյ ծառայելն է Անոր տունին պայծառութիւնը նպատակ ունենալով։

Կ'իմանամ թէ ժամանակէ մը ի վեր հոգեւոր Հովիւ չունիք եւ կ'սպասէ՞ որ բարեինամ եւ Գերշ։ Առաջնորդ Թորգոմ Սրբազն Զեզի հայթայթէ հոգեւոր Հովիւ։ Սրբազն Հայրը Զեզի շատ կը սիրէ։ սիրոյ արտայայտութեան տեսակները բազմաթիւ են։ Եթէ մինչեւ հիմա չէ հայթայթած հոգեւոր Հովիւ մը, պատճոը այն է որ ապահովաբար կը փափաքի Զեզի արժանի եւ Զեր ծուխին յարմարագոյն եւ շատ լաւ հովիւ մը ծարել որ Զեր բոլոր հոգեւոր կարիքները հոգայ։

Աստուծած Զեզ բոլորդ օրհնէ, կը մաղթեմ որ Շիքաթոյի մեր համայնքը միշտ

շէն ու կենսունակ ըլլայ, Զեր եկեղեցին մէջ միշտ աղօթքն ու խունկը, մոմն ու ձէթը չի պակսին:

Գերշ. Առաջնորդ Սրբազան Հայրը յանձնարարեցի ինծի որ հաղորդեմ Զեր բուլորիդ իր հայրական եւ սիրոյ ողջոյնները:``

Գիշերը եւ յաջորդ երկու գիշերները մնացի մոթէլի մէջ:

Կիրակի առաւօտ խօսեցայ Կիրակնօրեայ Վարժարանի երեխաներուն, խոստովանեցան եւ Ս. Հաղորդութիւն ստացան:

Ժամերգութենէն ետք տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ քարոզ, Հայերէն եւ Անգլերէն: Հաւատացեալները ամէնքն ալ լեցուն էին ուրախութեամբ:

Ս. Պատարագէն ետք թափօրով իշանք եկեղեցւոյ ներքնայարկը ուր ժողովուրու հաւաքուած էր եւ կատարեցինք տնօր հնէքի արարողութիւն: Վերջը այցելեցինք հիւանդի մը եւ կէսօրուան ճաշի հրաւիրուեցայ նախկին եգիպտահայ Աբրահամեան-ներուն տունը:

Շիքակոյի ծխական Խորհուրդը պահարանի մը մէջ ինծի տուաւ ճանապարհածախս եւ պատուագին:

Յաջորդ օրը անցուցի Հոգշ. Վարուժան Վար. Գապառածեանի հետ. Երեքշաբթի 12 Ապրիլի երեկոյեան նիւ Եղորք վերադարձած էի կատարած ըլլալով Զերդ Սրբազնութեան ինծի վստահած առաքելութիւնը:

Զաւէն Եպս. Զինչինեան

Հայոց Տիեզերական Եպիսկոպոս